



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Հինգշաբթի, Մայիս 25-ին Համբարձման տօնին առիթով, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Պատարագ մատուցուեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Ս. Պատարագը մատուցանեց եւ քարոզեց Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Նոյն օրը, յաւարտ Ս. Պատարագին, Համբարձման տօնի նուիրուած աւանդական ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ Լա Բանիատայի Descanso Gardens պարտէզին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութիւնը վայելող ձեռնարկը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ: Առաջնորդ Սրբազան հայրը սեղաններու օրհնութիւնը կատարեց եւ բացման խօսքով իր գնահատանքը յայտնեց Տիկնանց Մարմինին՝ այս աւանդական հաւարոյթին առթիւ:

Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան խօսեցաւ Համբարձման տօնին առնչուող մեր տոհմիկ կրօնական եւ ազգային աւանդութեանց մասին, նշելով որ գարնանամուտին զուգահիշող Համբարձման տօնը, յատկապէս իգական սեռին համար, ընտանեկան անդամներով եւ ընկերուհիներով դաշտագնացութեան, բնութեան գեղեցկութիւնները վայելելու եւ զբօսնելու լաւ առիթ մը եղած է հայոց աշխարհի խստաշունչ եւ երկար ձմռան եղանակէն ետք:

Գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր, որուն ընթացքին կատարուեցաւ վիճակի աւանդական արարողութիւնը:

## HOLY MASS AND LUNCHEON ON THE FEAST OF ASCENSION

On Thursday, May 25, on the Feast of Ascension, Holy Mass was offered at Glendale's St. Mary's Church. His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Mass, while Very Rev. Fr. Muron Aznikian conducted the Mass and delivered the sermon.

Following Mass, a traditional luncheon took place at Descanso Gardens in La Canada, under the auspices of the Prelate and organized by the Prelacy Ladies Auxiliary.

The luncheon began with the Prelate blessing the tables and commending the Ladies Auxiliary members. Very Rev. Fr. Muron Aznikian spoke about the religious and cultural aspects of Ascension, emphasizing how this feast is particularly special to Armenian females, who for centuries have celebrated this day with family and friends.

There was also an artistic program and the traditional drawing of fortunes.

\*\*\*\*\*

### CASPS-Ը ԿԸ ՊԱՏՈՒԷ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱԶՈՂԱԿ ՀԱՅ ՇՐՋԱՆԱԼԱՐՏՆԵՐԸ

Հինգշաբթի, 1 Յունիսի երեկոյեան ժամը 5:30-Էն սկսեալ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտէյլի Brandview Collection սրահին մէջ տեղի ունեցաւ հանրային վարժարաններէ շրջանաւարտ հայ յաջողակ աշակերտներու ի պատիւ CASPSի հանդիսութիւնը, ներկայութեամբ հանրային վարժարաններու տնօրէններուն եւ շրջանի կրթական մշակներուն եւ պատասխանատուներուն:

Հանրային Վարժարաններու հայ աշակերտներու դպրոցական կեանքին հետեւող Ազգ. Առաջնորդարանի յատուկ յանձնախումբը՝ որ կը կոչուի CASPS, իւրաքանչիւր տարեվերջին կը կազմակերպէ յատուկ հանդիսութիւն մը, պատուելու համար հանրային վարժարաններու այն հայ շրջանաւարտները, որոնք իրենց երկրորդականի ուսումնական շրջանը կ'ամբողջացնեն յաջողութեամբ:

Այս տարի, 10-րդ տարին ըլլալով, CASPSը պատուեց փայլուն հայ աշակերտները, որոնք կը յաճախեն Hoover, Glendale, Crescenta Valley եւ Clark Magnet երկրորդական վարժարանները:

### COMMITTEE FOR ARMENIAN STUDENTS IN PUBLIC SCHOOLS HONORS TOP ARMENIAN STUDENTS

In the afternoon of Thursday, June 1, the Committee for Armenian Students in Public Schools (CASPS) held its 10<sup>th</sup> annual banquet, under the auspices of the Prelate, at Glendale's Brandview Collection. In attendance were principals of public schools and educators from the community.

At the end of each school year, CASPS organizes a banquet to honor top Armenian students graduating from public schools. This year, the committee honored students from Hoover High, Glendale High, Crescenta Valley, and Clark Magnet.

\*\*\*\*\*

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՏԵՆՎԸՐ Կ'ԱՅՅԵԼԷ

Կիրակի, Յունիս 4-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի այցելէ Զուլորատոյի մեր եկեղեցւոյ ծխական համայնքը, Տենվըր:

Առաջնորդ Սրբազանը պիտի մատուցանէ Զուլորատոյի եւ Ռաքի Մաունթընի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հերթական Ս. Պատարագը եւ պիտի

փոխանցէ Յոգեգալստեան տօնին խորհուրդը ներկայացնող պատգամ մը:  
Առաջնորդ Սրբազան հօր պիտի սպասարկէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

**PRELATE CONDUCTS HOLY MASS AT  
THE COLORADO PARISH**

On Sunday, June 4, the Prelate will be visiting the Colorado and Rocky Mountain parish in Denver, where he will conduct Holy Mass on the Feast of Pentecost, and deliver a sermon relating to this Feast. Assisting the Prelate will be Very Rev. Fr. Muron Aznikian.

\*\*\*\*\*

**ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԱՍՏԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ**

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.-ի Լաս Վեկասի մասնաճիւղին, եւ նախաձեռնութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, Կիրակի Յունիս 4 ՎՆ ին, միօրեայ ընտանեկան հաւաքոյթ եւ Անդաստանի արարողութիւն տեղի պիտի ունենայ Լաս Վեկասի մէջ:

Տնօրինութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան պիտի այցելէ Լաս Վեկաս, հաւատացեալներուն պիտի փոխանցէ հոգեւոր իր խօսքը եւ պիտի կատարէ ժամերգութիւնն ու Անդաստանի արարողութիւնը:

**PRAYER SERVICE AND TRADITIONAL ANTASDAN  
AT THE LAS VEGAS PARISH**

On Sunday, June 4, a gathering for friends and families will take place in Las Vegas, organized by the H.M.E.M. Las Vegas chapter. The gathering is being held under the auspices of the Prelate. Very Rev. Fr. Barthev Gulumian will be present to offer his spiritual message, prayers and conduct the traditional “Antasdan” ceremony.

\*\*\*\*\*